

ՏԱՍԵՐՈՐԴ ՀԱՏՈՐԻՆ ԱՌԻԹՈՎ

Տասնհինգ տարիներ առաջ, 1970 թ.-ին, ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱ-ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ առաջին հատորի «Որպես Մուտք» խորագրուած ներածական խօսքին մէջ ըսուած էր. «Կը հաւատանք նման հանդէսի մը գոյութեան անհրաժեշտութեան իրաւունքին: Ինչպէս կը հաւատանք նաեւ որ կարելի է զայն ժամադրաւորը դարձնել հայագիտութեան տարրեր բնագաւառներով պարապող մեր մտաւորականներուն: ...Արտասահմանի մէջ ուժերը չէ որ կը պակսին, ոչ ալ միջոցները: Անկասկած նաեւ կը ցանկանաք հայրենի մտաւորականներու գործակցութիւնը»:

Այդ թուականէն տասնհինգ տարիներ ետք, այսօր, վերել մէջ-բերուած խօսքերը ոչ միայն տակաւին կը գտնենք արդարացի եւ իրաւ, այլ եւ, մեր առաքելութեան մէջ մեզ խանդավառող ու առաջնորդող նշմարտութիւններ: Դժբախտաբար սակայն, ամէն ինչ չընթացաւ համաձայն մեր ցանկութեան եւ ակնկալութիւններուն: Լիբանանի քաղաքական բնական պայմաններուն մէջ՝ 1984 թ.-ին, ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ տասնհինգերորդ հատորն էր որ պիտի գար լոյս աշխարհի, մինչ այսօր՝ ներկայ հատորը միայն տասներորդն է շար-ին: Լիբանանի պատերազմին տասը տարիները այդպէս պարտադրեցին ՀԱՆԴԵՍԻ գործընթացը: Եւ սակայն այս հատորի հրատարակութիւնն անգամ կը վկայէ գալիքին հանդէպ մեր լաւատեսութեան մասին, ինչպէս հաւատին՝ առաքելութեան մը կառչած մնալուն: Քանի որ կը հաւատանք Լիբանանին եւ մեր առաքելութեան:

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԷՍԻ տասերորդ հատորի հրատարակութեան առիթով կը խոստովանինք թէ անչափ մեծ է մեր պարտքը հանդէպ բոլոր անոնց, որոնց գործնական ու քարոյական աջակցութեամբ միայն իրականացաւ այն, ինչ որ շօշափելի փաստ է այսօր: Պարտուրաց չենք: Պատեհ ժամանակին կը խոստանանք հատուցանել պարտքի մեր բաժինը: Եւ կը յուսանք որ չ'ուշանար այդ մէկը:

Մինչ այդ՝ այս նոր հատորը հրապարակ կը դնենք տասնհինգամեակ մը առաջ բանածեւած մեր նշանաբանով:

«ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԷՍԻ էջերը բաց կը մնան բոլոր անոնց, որոնք գիտեն գիտական հիմքերու վրայ նետուած եւ առարկայօրէն ներկայացուած խօսքին արժէքը»:

ԽՄԲ.